ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պատմիչը ***Ագաթանգեղոս*** հունական անունից ենթադրում է, որ այդ անունը կրողը ***լատին*** է՝ այսինքն հույն:

2. ***Պարթևները*** պետություն ունեին Իրանի բարձրավանդակում: Պարթևական ժողովուրդը ապրել է Կասպից ծովի հարավարևելյան տարածքներում: Այս պետության առաջին թագավորը եղել է Արշակ Մեծը, որի անունից էլ Արշակունիները:

3. ***Արտևանը*** պարթև Արշակունիների վերջին թագավորն էր, որ սպանվեց Սասանյան Արտաշիրի ձեռքով 224 թվին: Սրանով վերջ դրվեց պարսիկ Արշակունիների հարստությանը:

4. Ալեքսանդր Մակեդոնացին աշխարհի առաջին մեծ զորավարն է: Գրեթե ողջ աշխարհը նվաճեց: Ծնվել է մ.թ.ա. 356 թվին, Մակեդոնիայում, մեռել է 323-ին՝ ընդամենը ապրելով 33 տարի:

5. ***Անտիոքոսը*** (մ.թ.ա.) 242-187 թվերին Սելևկյան մեծ պետության թագավորն էր, որի տիրույթների կենտրոնը Ասորիքն էր՝ Սիրիան, Բաբելոնը և Ասորեստանը:

6. ***Սելևկիոսը*** Սելևկյան մեծ պետության հիմնադիրն է: Թագավորել է 358-281 թվերին:

7. ***Նիկանորը*** պետք է լինի Նիկատոր (հաղթող):

8. ***Քետուրան*** ըստ Աստվածաշնչի՝ Աբրահամ նահապետի վերջին կինն էր Սառայից հետո: Ըստ Աստվածաշնչի՝ արաբական ցեղերը սերվել են Աբրահամից ու Քետուրայից:

9. ***Քուշանները*** ապրում էին Կենտրոնական Ասիայում: Մ. թ.ա. 2-րդ դարում ունեին պետություն: Մ.թ.ա. առաջին դարում նրանք տիրում էին Միջին Ասիան, Աֆղանստանը, Պարսկաստանը, Հայաստանի մի մասը: Մ.թ. 2-րդ դարում նրանք սկսում են անկում ապրել և վերջապես վերանում են պատմության թատերաբեմից:

10. ***Բահլը*** քուշանների թագավորության մայրաքաղաքն էր:

11. Տե՛ս ծանոթ. 3:

12. ***Արշակ Մեծը*** պարսից թագավոր էր: Նա իր պետության մայրաքաղաքը դարձրեց Բահլը: Թագավորեց 53 տարի: Հետագայում Արշակունիները կոչվեցին պահլավներ՝ Բահլ մայրաքաղաքի անունով: Այս Արշակը պարսից թագավորն էր, որ ըստ Խորենացու Վաղարշակին կարգում է հայոց թագավոր, որից սկսվում է հայ Արշակունիների հարստությունը:

13. ***Խոսրով Արշակունին*** Անակի դավադիր ձեռքով սպանվեց 245 թվին, և ժամանակավորապես Արշակունիների հարստությունը ընդհատվեց:

14. Տե՛ս ծանոթ. 2:

15. ***Վաղարշակը*** Արշակունի հայոց առաջին թագավորն էր, որ պարսից Արշակ Մեծի կողմից կարգվեց հայոց թագավոր:

16. Խոսրովի սպանությունից հետո միաժամանակ հայոց թագավորությունը ընդհատվեց՝ մինչև Տրդատը, որ սկսեց թագավորել 298 թվից:

17. ***Անակը*** Գրիգոր Լուսավորչի հայրն է: Արտաշիր Սասանականը Անակին ուղարկում է Հայաստան, որ Խոսրովին դավադրաբար սպանի: Երկու տարի Անակը մտերմանում է Խոսրով հայոց թագավորի հետ, վերջապես հաջողում է սպանել Խոսրովին և փախչել, բայց հետապնդվում, բռնվում և սպանվում է իր ողջ ընտանիքով: Միայն հաջողվում է մի երեխայի ազատել և փախցնել:

18. ***Ագաթանգեղոսը*** 5-րդ դարի հայ պատմիչ է, որ գրել է Գրիգոր Լուսավորչի միջոցով հայոց քրիստոնությունն ընդունելու պատմությունը:

19. ***Մարները*** կամ մեդացիները իրանական բարձրավանդակի հյուսիս-արևմուտքում են ապրել, ունեցել են պետություն: Համարվում են ներկայիս քրդերի նախահայրերը:

20. ***Առաքել պատմագիրը*** 17-րդ դարի հայ պատմիչ Առաքել Դավրիժեցին է, որ գրել է 17-րդ դարի հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական ծանրագույն վիճակի պատմությունը՝ նպատակ ունենալով առավել մանրամասն նկարագրել հայության բռնագաղթը Շահ Աբաս Առաջինի ձեռքով:

21. ***Երզնկան*** Արևմտյան Հայաստանի նշանավոր քաղաքներից է: Գտնվում է Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառում՝ Եփրատի աջ ափին: 1915 թվից առաջ Երզնկան ուներ 15 հազար հայ բնակիչ: Հայկական խոշոր մշակութային կենտրոն էր:

22. ***Աղթամարը*** Վանա ծովի կղզիներից է, որտեղ կառուցված է Սուրբ Խաչ վանքը մեծ ճարտարապետ Մանվելի նախագծով 615-921 թվերին: Սա հայոց չքնաղ ճարտարապետության գլուխգործոցներից մեկն է, որ չնայած մոտ 80 տարի վանքը թուրքերի տիրապետության տակ է և այնտեղ ոչ մի հայ մուտք չի գործել, բայց վանքը կանգուն է: 1113 թվից մինչև 1895 թիվը այնտեղ էլ կաթողիկոսություն կար:

23. ***Բաղեշը*** Բիթլիսն է, որ Մեծ Հայքի Աղձնիք նահանգի քաղաքներից է: Գտնվում է Վանա լճից18 կմ հարավ-արևմուտք:

24. ***Խլաթը*** Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Բզնունյաց գավառի քաղաքներից է: Գտնվում է Վանա լճի հյուսիս-արևմտյան ափին:

25. ***Մուշը*** Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառի կենտրոնական քաղաքն էր մինչև 1915 թիվը:

26. ***Խութը*** Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գավառներից մեկն է:

27. ***Սասունը*** Մեծ Հայքի Աղձնյաց նահանգի 10-րդ գավառն է: Հյուսիս-արևելքում սահմանակից է Տարոն գավառին՝ Մուշ կենտրոնով: